Թիւ 470 ՇՐՋԱՆ Թ. ՇԱԲԱԹ 1878 ՀՈԿՏԵՄԲԵՐ 7

ՀԱՅՐԵՆԻՔ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Ազգային ժողովը երեկ իւր սովորական նիստն ըրաւ ի Ղալաթիա ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և առենապետութեամբ Նուսուֆեան Տիգրան էֆէնտիի։

Յետ առենական գործողութեանց ֆաղաքական ժողովոյ պակասած հինգ անդամոց տեղ ընտրութիւն կատարուելով, ֆաղ. ժողովոյ անդամ ընտրուեցան հետեւեալ Մեծ. անձինք՝

Լողոֆէթ էֆէնտի	Գալեօղեան	
Առաքել	»	Ալթուն Տիւրրի
Յարութիւն	»	Սահակեան
Մարտիրոս	»	Միւհէնտիսեան
Տիգրան	»	Բարաղամեան

Յետ ընտրութենէն վերջը Պէկեան Թադէոս էֆէնտիի սառարգրութեամբ դիր մը կարդացուեցաւ որ Հայկական խնդրոյն վրայ ոչ թէ Մասնաժողովոյ մէջ այլ յառենի Ազգային ժողովոյ իւր վաւերական գրութիւնները կարդալու և խօսելու իրաւունք ունենալը յայտնելով, Ազգ. ժողովոյ կամացը կը դիմէր։ Ապա վրայ Ս. Պատրիարք Հայրը խօսք առնելով խնդրոյ դիւանէն և ժողովէն որ թոյլ տայ Պէկեան էֆէնտիի իւր գրութիւնները կարդալու. ժողովը կանոնադրութեան դէմ համարեցաւ. սակայն երբ Ս. Պատրիարքը յայտարարեց որ եթէ Պէկեան էֆէնտիի թուղթերը այսօր չը կարդացուին, ինքն ա՛յլ եւս չէ Պատրիարք Հայոց, և միւս կողմանէ ժողովրդեան բաղմութիւն մը կը միջամտեր «պէտք է կարդացուի» ըսելով, ժողովը խոհեմութիւն համարեց պահ մը դադար տալ այս մասին խորհրդակցելու համար. ուստի երեսփոխանք դուրս ելան։

Այս միջոցին խառնակ բաղմութիւն մը Ս. Պատրիարքին սենեակը խուժեց որ կը պօռար թէ Պատրիարքի հրաժարական չընդունին և կը խնդրեր որ Պէկեան էֆէնտիի թղթերը կարդացուին։ Պահ մը դադարէ վերջը երեսփոխանք կրկին դումարեցան և Ս. Պատրիարք Հայրը հրաման ըրաւ Պէկեան էֆէնտիի իւր թղթերը կարդալու յառենի ժողովոյ և իւր ժողովրդեան։ Յայնժամ Պէկեան էֆէնտի բեմը ելաւ և դիւանը պարագ ընալով կարդաց իւր առենախօսութիւնը։

Պէկեան էֆէնտիի առենախօսութիւնը պարզ քննադատութիւն մ՚էր տարիէ մը ի վեր տեղի ունեցած ազգային շարժման և Ազգ. ժողովոյ ներկայացեալ կանոնադրին, որով կը ճգնէր ցուցնել թէ քաղաքագիտական սխալ քայլ առնուած էր և Ազգին իրական ցաւերը չէին հաղորդուած Ազգ. ժողովոյ։ Սակայն երեսփոխանութիւնը վաւերական «տօքիւմաններ» կրնպասէր լսել Պէկեան էֆէնտիէն Հայկական խնդրոյն մէջ տեղի ունեցած դաւ և խարդաւանանքը հաստատող. սակայն ցաւալի է ըսել որ այսպիսի գրութիւն մը երբէք չունէր ի ձեռին։ Ռուսի յաւարտ առենախօսութեան որ մինչև ժամը 11½ տեւեց, թէև Ս. Պատրիարք Հայրը ՚ղինքն հրապարակի մէջ յանիրաւի նշաւակող հրատարակութիւններէն վիրաւորեալ հրաժարականին վրայ կը պնդէր, սակայն 25 երեսփոխանք հեռեւեալ պատճառաբանեալ օրակարգն առաջարկելով, ժողովը միաձայնութեամբ ընդունեց և առեանը փակուեցաւ ժամը դրեթէ 12ի մօտ։

Ահաւասի՛ք օրակարգը։

«Հայկական խնդրոյ մասին Պէկեան Թադէոս երեսփոխան էֆէնտիին քննադատութիւնները՝ երեսփոխանական ժողովս հակառակ իւր կանոնաց և որոշման, լսեցին յետոյ, սրբազան պարտաւորութիւն կը համարի իւր խորին և անմոռաց շնորհակալութիւնն յայտնել իւր սրբազան Նախադահին՝ Ամենապատիւ Տ. Տ. Ներսէս ազգասէր սրբազան Պատրիարքին, Հայկական խնդրոյն մէջ սկիզբէն ի վեր իւր մատուցած անշահասէր և անձանձիր ծառայութեանցն համար։

Նաև Ազգային ժողովս կը վստահայ իւր սրտագին շնորհակալիքն յայտնել այն ամեն կրօնական և աշխարհական անձանց՝ որք թէ նիւթապէս և թէ բարոյապէս այս գործին մէջ չզլացան իրենց ջանքը, խորհուրդն և ամենայն ինչ որ կարելի էր՝ առ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրն։

Հետևապէս Ազգային ժողովը Պէկեան էֆէնտիի. երած քննադատութիւնքը և ցուցեցած փաստերը անտեղի և առոչինչ համարելով, կանցնի իւր օրակարգին։»

Ֆաղ. ժողովը երեքշաբթի օր ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր ի Պատրիարքարան նիստ ընելու հրաւիրեալ ըլլալով, թէև մեծամասնութիւն չունեցաւ, սակայն Սերաստացի Վարդանայ խնդրոյն վրայ պաշտօնէից ոմանց բացատրութիւնները լսեց և քննութիւնը տակաւին չարունակել հարկ ըլլալով, փոխանորդի ընտրութիւնը ուրիշ առթի մնաց։ Մի և նոյն օրը կրօնական ժողովս ալ նիստ ունենալով ի Պատրիարքարանի, դրեթէ ամուսնական խնդիրներով զբաղեցաւ։

Նոյն օրը Ցնտեսական խորհրդոյ և ելևմտից Հոգաբարձութեան անդամներն ալ հրաւիրուած էին ֆաղ. ժողովոյ հետ համախորհուրդ նիստ կազմելով պիւտճէն պատրաստելու համար. սակայն ֆաղ. ժողովոյ մեծամասնութիւն չունենալուն պատճառաւ պիւտճէին խնդիրը մէկ կողմ դրուելով, Ս. Պատրիարք Հօր առաջարկութեամբ Ցնտեսական խորհրդոյ և ելևմտից Հոգաբարձութեան մէջ ծադած հաշուական խնդիրոց մասին քննութիւն մը ընել պատշաճ դատուելով, Ցնտ. խորհրդոյ առենապետ էֆէնտին յայտարարեց թէ երեսունի չափ ամբաստանութիւն ունի ելևմտից Հոգաբարձութեան դէմ որոնք նենգութեան, խարդախութեան և զբաղկանաց կը վերաբերին։ Ցնտեսական խորհրդոյ ըսին յայտարարութիւնը պարտաւորեց Ս. Պատրիարք Հայրը ժամարները բերելով անմիջապէս քննութիւն ընել սկսիլ. ուստի Ցնտ. խորհրդոյ դիւանը սկսաւ մի առ մի հաստատել և ապացուցանել իւր ամբաստանութիւնները որոնք ելևմտից Հոգաբարձութեան նենգութիւնները ի վեր կը հանէին և նոյնին անդամները իբրև նենգող կը հրատարակէին։ Թէ՛ Ս. Պատրիարք Հայրը, թէ՛ խորհրդական Սրբազան և թէ՛ ֆաղ. ժողովոյ անդամները ժամարներէն քաղելով և ստուգելով կատարելապէս համոզուեցան թէ ելևմտից Հոգաբարձութիւնը՝ գլխաւորապէս Առենապետը և Գանձապետը, վասն զի մնացեալ երկու անդամները բնաւ տեղեկութիւն մը չունենալնին և այսպիսի բան մը երբէք չընդունելնին յայտարարելով առած քաղած էին, յանցաւոր են և պէտք է

պաշտօնանկ լինին. սակայն ինչ. ժողովը ինչպէս ըսինք, մեծամասնութիւն չունենալով, յաջորդ նիստին թողուեցաւ։

Այս ամբաստանութիւններէն մին պատմենք։

1877 դեկ. 31ին 140 հատ ոսկի որ յանուն դաղթականաց հաւաքուեցէ եղեր, 248 ½ ղրուշէն թղթադրամի վերածուեր է, մինչդեռ 1878 յունվար 31 ին սոյն 140 ոսկւոյն 25 հատ հարիւրնոց թուղթի վերնաս նշանակուեր է ժողովոց մէջ, սա առարկութեամբ թէ 140 ոսկին ոչ թէ 248 ½ ղրուշէն այլ 230 ղրուշէն թղթադրամի վերածուած ըլլալով, յիշեալ տարբերութիւնը դոյացած է և երբ Ցնտ. խորհուրդը 1878 ապրիլ ամսոյն մէջ ահմանադրական տարեդլխոյն առթիւ նոտուկին հաշուեցուցակը պահանջելով սոյն 25 թուղթի տարբերութիւնը տեսնելով դիտողութիւն ըրեր է, ելևմտից հսգաբարձութիւնը այս տարբերութիւնը սխալման մը արդիւնք է ըսելով երեք ամիս վերջը այսինքն յուլիս 27ին սոյն տարբերութիւնը այն է, 25 թուղթը հասոյթ կը նշանակէ։

Արդ Ցնտ. խորհուրդը գանգային և լրագրաց հրատարակած փիացայէն քննելով տուգեր է թէ 78 յունվար ամսոյ մէջ բնաւ 230 ղրուշի փիացա եղած չէ այլ 249 էն մինչև 270 եղած է։

Ասկէ զատ ուրիշ խել մը ոսկիի հաշիւներ ալ կան նմանօրինակ ձևի և գոյնի ներքև ղրս ուրիշ առթիւ պիտի հրատարակեմք։ Լսեցինք թէ ելևմտից հսգաբարձութեան գանձապետը գատրիարքարանէ պաշտօնէից ամանականներն ալ կը կոտրէ եղեր։

Ինչ խիղճ և դգացում ունենալու է մարդ ազգային սնոտուկին և պաշտօնէից հետ այսպէս վարուելու համար։

Գասբմ-Լուշայի նախկին թաղական խորհուրդ անուն ներկայուր խմբակին առենապետ և գանձապետ Աւետիս տէր Ստեփանեան անուն անձը կը լսենք թէ այս շաբթու Զաթալճաի մէջ 11 կտոր արտ գնելու ելեր է, չգիտենք որո՞ւ ստակով։

Այս այն անձն է, զոր նախորդ թերթով փոքր իշատէ ծանօթացուցածիկինք։

Եկեղեցւոյ սնոտուկէն քսան հազար ղրչէ աւելի ստակ իւր կոկորդը անցուցնելէ վերջը երբ ազգային վարչութեան պատասխանատու Ցնտեսական խորհուրդը կը չանայ այդ անմարսելի ստակը փսխել տալ, Աւետիս տէր Ստեփանեան կաղաչէ կը պաղատի «ոու նո ծաթեմ ուսկից տամ» կըսէ և գթութիւն կը հայցէ։

Ահա այս գթութիւն հայցող անձը Զաթալճաի մէջ 11 կտոր արտ գնելու ելեր է այսօր հարկաւ եկեղեցւոյ ստակով։

Այս մասին ժամ յառաջ և վերջնական ծանօթութիւն մը կ'սպասենք Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէն, ազգային կեդրոնական վարչութենէն և Ցնտեսական արդարակորով խորհուրդէն, որպէս զի նոր հանդարտած թաղ մը վերստին ակնարկելու չըլլայ։

Զարիքը չը մեծցած պէտք է խղդել

— վարժապետական ժողովը վաղը ժամը 7ին իւր երրորդ նիստը պիտի ընէ Ղալաթիոյ կեդրոնական վարժարանը։

— Նոյնպէս վաղը եկէնի խաբուի վարժարանին մէջ պիտի տեղեկագրէ Մեծ. Ծովհ. Եփ. Տէրոյենց։

— Գեր. Տ. Խորէն սրբազան Նար-Պէյ հինգշաբթի օր Ս. Փէթրոսպարկէն մայրաքաղաքս վերադարձաւ։

— Բ. Դրան արտաքին գործոց Թարգմանութեան անդամ և Ցնտեսական խորհրդոյ առենապետ, Գաբրիէլ Էֆէնտի Նորաուսկեան Սերվիոյ սահմանաց ուղղութեան յանձնաժողովին առաջին քարտուղարի պաշտօնով երէկ մայրաքաղաքէս մեկնեցաւ։

—Սերաստիոյ Գեր. Առաջնորդին կողմանէ ի Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ քիլէճի վարդան անուն անձը Սերաստիա ժամանած չէ։ Իսկ ձանիկի առաջնորդէն տակաւին պատասխան չէ եկած։

Ս. Պատրիարք Հայրը հինգշաբթի իրիկուն թագրիր դրեց առ ոստիկանութեան վսեմ. Նախարարն որ կարելի եղածին չափ ուղիով հեռագիր ղարնէ պէտք եղած տեղերը և քիլէճի վարդանին ուր գտնուիլը տեղեկանալով իրեն իմացնել բարեհաճի։

Կը լսեմք թէ Գաղատաու առաջնորդ Գեր. Մաղաքիա վարդապետ ազգ. Պատրիարքարանի մինոյաւ Բ. Դրնէն հրաման խնդրած է Գաղատաու մէջ մի ազգային տպարան հաստատելու և մի լրագիր հրատարակելու՝ Զան Բոթելնէ անունով, որոյ տնօրինութիւնն առանձնած է ազգասիրաբար Միհրան Էֆ. Հ. Սըվաճեան Գաղատաի ազգ. վարժարանի ներկայ դաստատուն։

Կը գովեմք այս խորհուրդն և այս ձեռնարկութիւնն, որ անշուշտ մեծամեծ օգուտներ պիտի ընծայէ ազգին. մասնաւորապէս Գարսկահայքն ու Հնդկահայքը մեզ Ցահկահայոցս հետ հաղորդակցութեան մէջ դնելու միջոց մը պիտի ըլլայ, որուն ամենայն յաջողութիւն կը մաղթեմք ի սրտէ։ Կը փափաքիմք մանաւանդ որ շատ դաւառներու առաջնորդներ, որք ներքին կռիւ ու երկպառակութիւն յարուցանելով, և կամիրենց անձը միայն պարարելով կըզբաղին, օրինակ առնուն Գաղատաու Գեր. առաջնորդէն, որ այնպիսի հեռաւոր երկրի մէջ իսկ՝ իւր ազգայնոց օգտակար լինելու վսեմ խորհուրդէն ետ կեցած չէ։

Գալով Միհրան Էֆ. Հ. Սըվաճեանի, որ ինչպէս վերն ըսինք, առանձնած է հրատարակելի հանդիսին տնօրինութիւնն ու խմբագրութիւնը, արդէն ծանօթ է ազգայնոց իւր ազգասիրութեամբ ու անձնուէր ծառայութեամբն ի հաճըն և այլուր, ուստի և անոր անցեալն կերաշխաւորէ ապագայն համար թէ Բոթելնէ Զանն՝ իւր միջոցաւ ախորժելի և օգտակար պիտի ըլլայ ընթերցողաց։

Հալէպէն՝

7 սեպտ. 1878 ի Բերթա

ՊԱՏՈՒԱԿԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ՅՈՑՑԵՐ

. . . Խմբագիր Տէր. Հայրենիք լրագրոյ։

Փոնկի 1301 թիւին մէջ գաւառները առաջնորդաց և տեղապահներու պատճառաւ ծագած խռովութեանց և յուզմանց մասին խիստ հասուն և իրաւացի դատողութիւն մը տեսանք որուն մէջ խմբագիրը օրինակ կը բերէր նաև քաղաքիս մէջ առաջնորդական ընտրութեան պատճառաւ ծագած խռովութիւնները, զոր բուն արժանիքովը գնահատած էր, ըսելով թէ Օրտուի բարբարոսական անցքը, Հալէպի եղելութիւնը, որ ինչպէս տարիէ մը ի վեր կը շաբունակուի. այնպիսի բռնապետական և լրբենի ընթացքով մը, որ միմիայն պապական կղերին յատկանիշն է. արդէն Մասիսի 2161 թուոյն մէջ մեր նշանաւոր տեղապահին խոլական առաջնորդական ցանկութիւնը մասամբ իւիք նկարագրուած ըլլալուն, մենք այս տեղ հարկ չենք համարիր այն մասին ընթերցողաց զգացումները վերաւորել. մենք միայն գաւառներու մէջ առաջնորդաց և տեղապահներու գործած վնասը բուն իրենց իրական իմաստովը երևան հանելու համար, Պ. Սարաճի նոցա մասին գրած հետևեալ ոսկի տողերը տակաւ կը բերենք։

« Բարձին՝ առլև հազար խօստում, իսկ բարձին վրայ է՝հ . . . դրժում և մոռացօն. . . : Բեմին վրայէն կեղծ ու պատիր զանցառութիւններ, անոտի ցոյցեր, իսկ պաշտօնին մէջ դաւադրութիւն. անաստուածութիւն: Խուժանին առլև կեղծ ազգասիրութիւն, իսկ առանձնութեան՝ մէջ մատնութիւն: Հրոսակին ներկայութեանը՝ ժանգոտ երկիւղածութիւն, իսկ խուցը անհաւատութիւն: Բանաբկութիւն, թուք և մուր ժողովրդեան առլև, իսկ վատ և գետնաքարշ ստրկութիւն աթոռին վրայ »: Ահաւասիկ այս է գաւառներու մէջ առաջնորդաց բռնած ընթացքը, որոց ապացոյց են անհամար գանգատներն ու բողոքներն: Մենք ալ մեր ներկայ տեղապահին կեղծ ազգասիրական խօստումներէն խաբուած, դպրոցներու բարեկարգութիւնն, ազգային խաղաղութիւն, և հազար ու մէկ բարիքներ կը յուսայինք։

Բայց դժբաղդաբար մեր բոլոր յոյսն ի դերև ելաւ. մեր ազգասէր և ուսումնասէր տեղապահը, այսօր 14 ամիս է քաղաքս կը գտնուի, սակայն մեր կենսական պիտոյքը, որ է երկաւոր վարժարանաց բարեկարգութիւնը ու յառաջդիմութիւնը, ընդհակառակն նոցա փակուած ու խանդարուած տեսանք, փոխանակ Սաղմոս Նարեկի՝ ընթերցանութեան օգտակար դասերու աւանդութիւնը տեսնելու, գոնէ ուսումնական դասատուի մը[illegible] հաստատութիւնը, փոխանակ առաջնորդական և անհատական վճռուն, կռիւներու բարձումը տեսնելու, նոցա առաւելութեամբը կը փծանք, այսօր։

Վասնզի այս բարիքները, մեր տեղապահին աչքերուն մէկ մէկ փուշեր կ'երևան, իրեն պէտք եղածն է Բերթոյ առաջնորդական գահը բարձրանալ՝ հակառակ ժողովրդեան և լրջամիտ մասին բաղձանացը և Սահմանադրութեան Սահմանադրական ժողովներ կազմուեցան, բայց այս ժողովները՝ փոխանակ ներկային և ապագային համար աշխատելու, յաջորդական նիստեր յիշեալ ազգասէր տեղապահին փառասիրութեանց և կեղծ ու պատիր դարձուածոց դոհ գացին ապարդիւն, առաջնորդական օրինաւոր ընտրութիւնը ոչնչացուց, որպէսզի ինքըն ընտրուի, և տակաւին առանց ամչնալու դպրոցի բարեկարգութեան համար կեղծ և ստոյգ խօստումները կը շարունակէ, մինչդեռ այդ խօստումներու իրագործութեան համար թէ՝ ինքը և թէ՝ իր ընտրած ժողովականները նոյնին հակառակ են, բացի Եկաւեան Մարտիրոս էֆէնտիէն, որ դատաքարտուղութեան

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Ա. ՀԱՅԿԱԶՆ

(Շարունակություն)

Ա

Ամառվան տաք ցերեկներից մեկն էր։ Ամպերը ծածկել էին երկինքը, և արևի ճառագայթները չէին կարողանում ներս թափանցել։ Ամեն ինչ մռայլ էր, տխուր։ Ամպերի միջից երբեմն-երբեմն դուրս էր գալիս արևը, բայց նորից ամպերի մեջ էր մտնում։ Ամպերը ծանր էին, ցած էին իջել, և թվում էր, թե ուզում են ամբողջ աշխարհը ծածկել։ Ամեն ինչ լռության մեջ էր թաղված։ Ամեն ինչ ինչ-որ սարսափելի բան էր սպասում։ Ամեն ինչ ինչ-որ սարսափելի բան էր սպասում։

Ա

Ամառվան տաք ցերեկներից մեկն էր։ Ամպերը ծածկել էին երկինքը, և արևի ճառագայթները չէին կարողանում ներս թափանցել։ Ամեն ինչ մռայլ էր, տխուր։ Ամպերի միջից երբեմն-երբեմն դուրս էր գալիս արևը, բայց նորից ամպերի մեջ էր մտնում։ Ամպերը ծանր էին, ցած էին իջել, և թվում էր, թե ուզում են ամբողջ աշխարհը ծածկել։ Ամեն ինչ լռության մեջ էր թաղված։ Ամեն ինչ ինչ-որ սարսափելի բան էր սպասում։ Ամեն ինչ ինչ-որ սարսափելի բան էր սպասում։

Ա

Ամառվան տաք ցերեկներից մեկն էր։ Ամպերը ծածկել էին երկինքը, և արևի ճառագայթները չէին կարողանում ներս թափանցել։ Ամեն ինչ մռայլ էր, տխուր։ Ամպերի միջից երբեմն-երբեմն դուրս էր գալիս արևը, բայց նորից ամպերի մեջ էր մտնում։ Ամպերը ծանր էին, ցած էին իջել, և թվում էր, թե ուզում են ամբողջ աշխարհը ծածկել։ Ամեն ինչ լռության մեջ էր թաղված։ Ամեն ինչ ինչ-որ սարսափելի բան էր սպասում։ Ամեն ինչ ինչ-որ սարսափելի բան էր սպասում։

ՎԱՂԱՆԱՑԻ ԳԱՐԵՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածին, 1913։

Ս. Հոյսեփեան

ԱՐՇԱԿ ԲԱՐԴԱՒԵԱՆ

ՀԱՅ ՄԵԾ ՄԱՐՏԻԿ

ՀԱՏՈՐ Ա.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂԱՆԱՑԻ ԳԱՐԵՆ

Ս. Էջմիածին, 1913։

Ս. Հոյսեփեան

ՀԱՅ ՄԵԾ ՄԱՐՏԻԿ

ՀԱՏՈՐ Ա.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂԱՆԱՑԻ ԳԱՐԵՆ

Ս. Էջմիածին, 1913։

Ս. Հոյսեփեան

ԱՐՇԱԿ ԲԱՐԴԱՒԵԱՆ

ՀԱՅ ՄԵԾ ՄԱՐՏԻԿ

ՀԱՏՈՐ Ա.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂԱՆԱՑԻ ԳԱՐԵՆ

Ս. Էջմիածին, 1913։

Ս. Հոյսեփեան

ՀԱՅ ՄԵԾ ՄԱՐՏԻԿ

ՀԱՏՈՐ Ա.